ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2017 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-158-19.10.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1316 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-158-19.10.2017-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-158-19.10.2017-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է լրամշակել ներկայացված նախագիծը՝ հաշվի առնելով ստորև ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները՝

1) սույն թվականի հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացրած նույնանուն օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, համաձայն որի ԱԱՀ-ից ազատվել է նաև ԱՏԳ ԱԱ 8452 21 000 0 ծածկագրին դասվող ապրանքների (մեքենայական կարի մեքենաներ) ներմուծումը: Մինչդեռ, ներկայացված նախագծով առաջարկվում է նշված ծածկագրին դասվող ապրանքների ներմուծումը կրկին հարկել ԱԱՀ-ով, ինչն ընդունելի չէ.

2) նախագծից հանել ԱՏԳ ԱԱ 6902 ծածկագրին դասվող ապրանքների (հրակայուն աղյուսներ, բլոկներ, սալիկներ և նույնանման հրակայուն կերամիկական շինարարական նյութեր) ներմուծումն ԱԱՀ-ից ազատելու առաջարկությունը, քանի որ ԱԱՀ-ից ազատվող ապրանքների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն դրանք որպես հումք

օգտագործելու հանգամանքը, այլ նաև այդ ապրանքները երկրի ներքին տարածքում արտադրելու հնարավորությունները.

3) օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

ա. նախագծի 1-ին հոդվածով կատարվող լրացմամբ սահմանվում են ապրանքների ծածկագրեր, որոնք ազատվում են ԱԱՀ-ից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշված ծածկագրերով ապրանքները լրացնել նաև գործող օրենքի «Ապրանքների համառոտ անվանումը» սյունակում,

բ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունած՝ վերը նշված օրենքով գործող օրենքի 1-ին հոդվածը երրորդ պարբերությունից հետո արդեն լրացվել է նոր պարբերությամբ: